

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 58/7

28 դեկտեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.12.2012թ-ի նիստում քննության է առնվել «Եղեգնաձորի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ 27.11.2012թ-ի թիվ 16 գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 22.11.2012թ. թիվ 1421193 վարչական ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ վարչական ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

«ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 22.11.2012թ-ին կազմվել է թիվ 1421193 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է հետևյալը.

«Եղեգնաձորի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) պատկանող 543-SL18 պետհամարանիշի «Զիլ ՄՄՁ 554» մակնիշի ավտոմեքենան, ս.թ. նոյեմբերի 22-ին ժամը 12:00 սահմաններում ք.Եղեգնաձոր, Երևանյան խճուղու 7 հասցեի մոտակայքում մեր կողմից կանգնեցվեց ստուգելու համար: Պարզվեց, որ մեքենայի թափքում առկա էր շինանյութ, ընդհանուր գումարով 1.020.000 դրամի, որը ք.Եղեգնաձոր, Երևանյան խճուղու 7 հասցեից տեղափոխվում էր Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղի շինհրապարակ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ վերը նշված ապրանքախմբաքանակի համար չէր տրվել ապրանքի տեղափոխման բեռնագիր և չէր գրանցվել առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման գրքում, խախտելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հավելվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության պահանջները: Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ տուգանք չգրանցված ուղեկցող փաստաթղթերով ապրանքների գնի (արժեքի) 50% չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալ արձանագրությամբ արձանագրված խախտումը, այն է՝ ապրանքների տեղափոխումն առանց բեռն ուղեկցող փաստաթղթերի, «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 1-ին բաժնի պետի կողմից 22.11.2012թ-ին ընդունվել է թիվ 1421193 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ չգրանցված ուղեկցող փաստաթղթերով ապրանքների գնի (արժեքի) 50% չափով, գումարով 510.000 դրամ:

«Եղեգնաձորի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

2012 թ-ի նոյեմբերի 22-ին ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության առաջին բաժնի աշխատակիցները կատարել են ուսումնասիրություններ և կազմել են թիվ 1421193 արձանագրությունը: Արձանագրությունում նշվել է, որ իբրև 2012 թ-ի նոյեմբերի 22-ին, ժամը 12:00 սահմաններում Եղեգնաձոր քաղաքի Երևանյան խճուղու թիվ 7 հասցեի մոտակայքում իրենց կողմից կանգնեցվել և ստուգվել է ընկերությանը պատկանող 543-SL18 պետհամարանիշի Զիլ ՄՄՁ 554 մակնիշի ավտոմեքենան բեռնված շինանյութով, որը պետք է մեկներ Վայոց Ձորի մարզի Խաչիկ գյուղի միջնակարգ դպրոցի շինարարական հրապարակ:

Արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ընկերության կողմից Խաչիկ գյուղում իրականացված շինարարական աշխատանքներն ավարտվել է 2012թ. սեպտեմբերի 27-ին: Ընդ որում, շինության բացման արարողությունը կատարվել է հոկտեմբերի 6-ին, որին մասնակցել է երկրի նախագահը, պաշտոնատար այլ անձինք: Նամակին կցվում է օբյեկտի շահագործման ակտի պատճենը: Բացի դրանից, հոկտեմբերի 17-ին վերը նշված ավտոմեքենայի վարորդը ազատվել է աշխատանքից: Ավտոմեքենան կանգնեցվել է մինչև նոր շինարարական աշխատանքների սկսելը: Հայտնում ենք նաև, որ 2012թ-ի նոյեմբեր ամսվա ողջ ընթացքում ընկերությունն ընդհանուր առմամբ

շինարարությամբ չի զբաղվել, ուստի առարկություն եմ ներկայացնում թիվ 1421193 վարչական ակտի նկատմամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է մերժման:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՕՀՎ 1-ին բաժնի աշխատակիցների (ընկերության տնօրեն Վ.Սմբատյանի մասնակցությամբ) կողմից 21.11.2012թ-ին կազմել է արձանագրություն, որում մասնավորապես նշվել է հետևյալը.

ս.թ. նոյեմբերի 21-ին ժամը 12:00 սահմաններում ք.Եղեգնաձոր, Երևանյան խճուղու 7 հասցեի մոտակայքում կանգնեցվել է 543-SL18 պետհամարանիշի <Ջիլ ՄՄՁ 554> մակնիշի ավտոմեքենան դրա թափքում առկա բեռի փաստաթղթավորման ճշտությունը ստուգելու համար: Կատարված ստուգմամբ պարզվեց, որ ավտոմեքենան առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի ք.Եղեգնաձոր, Երևանյան խճուղու 7 հասցեում գտնվող ընկերության բազայից Վայոց Ձորի մարզ, Խաչիկ գյուղի շինհրապարակ էր տեղափոխում 1020 հազ. դրամի արժեքով շինանյութ: Ըստ բեռն ուղեկցող ընկերության տնօրեն Վ.Սմբատյանի հայտարարության, բեռի համար համապատասխան ուղեկցող փաստաթուղթ չլինելու պատճառը եղել է իր շտապողականությունը: Արձանագրությունը ստորագրված է այն կազմած ՕՀՎ 1-ին բաժնի աշխատակիցների, ինչպես նաև ընկերության տնօրեն Վ.Սմբատյանի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ ապացույցը հիմնավորում է ընկերության կողմից <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հավելվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության պահանջների խախտման հանգամանքը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է եզրակացություն, որով առաջարկել է <Եղեգնաձորի բնակարանային կոմունալ տնտեսություն> ԲԲԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհուրդի եզրակացությունը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

<Եղեգնաձորի բնակարանային կոմունալ տնտեսություն> ԲԲԸ 27.11.2012թ-ի թիվ 16 գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԱՂՄԵՂՅԱՆ